

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտները բազմաթիվ նոր աշխատություններ են հրատարակել նվիրված գիտության ու կուլտուրայի տարրեր բնագավառներին:

Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը 1955 թվականի ընթացքում լույս է բնծալել մի շարք գրքեր, որոնք լուստարանում են ինչպես անցյալի կրթիկ գրական ժառանգության հարցերը, այնպես էլ սովետական արդի գրականության խնդիրները:

ԽԱՉԱՍՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ, «Նեկերի լիակատար ժողովածու», հատոր 6-րդ, տեխնոլ. ծանոթագրություններով, անձնաւունենների բառարանով և անվանացանկով, 1955 թ., 339 էջ:

Այս հատորը հայ մեծ լուսավորիչ գրող և Արովյանի երկերի ակադեմիական հրատարակության հերթական հոտորն է, որտեղ զետեղված են Արովյանի գործառնյան օրագրերը: Այդ օրագրերը ամբողջու-



թյամբ առաջին անգամ են տպագրվում և խիստ արժեք են ներկայացնում Արովյանի կյանքի ու ստեղծագործությունն համար: Չնայած օրագրերի օրոշ շափով անմշակ լեզվին ու նյութերի կրկնություններին, գործառնյան օրագրերի մեջ հատուկ ու անմիջական արտացոլում են գտել Արովյանի վերաբերմունքն ու ապրումները օտար միջավայրի, իրեն շրջապատող մարդկանց ու իրականության նկատմամբ: Այդ օրա-

գրքերի մեջ էլ արդեն երևում է Արովյանի շերտ հայ-ընկաթրությունը և իր ժողովրդին ծառայելու մեծ պատրաստակամությունը:

Արովյանի երկերի ժողովածուի հրատարակության գլխավոր խմբագիրն է բանաստեղծ ակադեմիկոս Ավետիք Իսահակյանը:

Պ. ՀԱԿՈՐՅԱՆ, «Խ. Արովյանի «Վերջ Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը», 1955 թ., 254 էջ:



Պ. Հակոբյանի աշխատությունը նվիրված է Խ. Արովյանի «Վերջ Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությանը: Աշխատությունը կարևոր ու հետաքրքրական է ոչ միայն Արովյանի ստեղծագործության ուսումնասիրության ու լուստարանման համար, այլև ամբողջ հայ գրականության համար, որովհետև «Վերջ»-ը խոշոր ազդեցություն և անշնչելի հետք է թողել հայ խոշորագույն գրողների ստեղծագործության վրա: Հեղինակը փաստացի անդնկություններով ու համոզիչ մեկնաբանություններով պարզաբանում է Խ. Արովյանի անմահ ստեղծագործության նախապատրաստության պրոցեսը, մեծ գրողի մասհղացումներն ու նախասիրությունները:

«Վերջ Հայաստանի» վեպի գրության ժամանակն ու տարրերակները սրուշելու նպատակով հեղինակը հմտորեն օգտագործում է Արովյանի արխիվի նյութերը և պարբերական մամուլի բազմաթիվ տեղեկու-

թյունները, ճշտում է վեպի գրության թվականը, հաստատելով, որ «Վերք»-ը գրվել է 1841 թվականին և ոչ զրանից վաղ: Հեղինակը հետաքրքրական դուգան է անցկացնում «Վերք Հայաստանի» վեպի ձևագրի կրթ տարբերակների միջև և ցույց տալիս, թե ինչպես Արուսյանը ստեղծագործական համառ աշխատանքով խորացրել և հարստացրել է վեպի բովանդակությունը, առանձին նախատիպերից ու դեպքերից բարձրացել զեղարվեստական ընդհանրացման և ստեղծել անմեռ կերպարներ ու տիպեր, ժանրային, կառուցվածքային ու լեզվական հարստե մշակման միջոցով վեպը դարձրել զեղարվեստական կուռ ամբողջություն:

Ա. ԻնձիկՅԱՆ, «Ավետի Բաճակյան», մենագրություն բանաստեղծի կյանքի և գրական գործունեության մասին, 1955 թ., 239 էջ:



Ա. ԻՆԶԻԿՅԱՆ

ԱՎԵՏԻ
ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Խորապես ուսումնասիրելով հայ քնարական բանաստեղծության վարպետ Ավետի Բաճակյանի ստեղծագործական կյանքն ու գրական ժառանգությունը հեղինակը հաջողությամբ բնութագրել է Ա. Բաճակյանի ստեղծագործական դեմքը, նրա բանաստեղծության յուրահատկությունները և միաժամանակ այն կապերն ու ընդհանրությունները, որոնցով Բաճակյանն առնչվում է հայ գրականության առաջավոր ավանդների հետ: Հեղինակը վերլուծության մեջ ցույց է տվել բանաստեղծի միեմունք մոտիվի

կամ թեմայի տարբեր գրաեորումներն ու նրբերանգները հասարակական-տնտեսական տարբեր հանգամանքներում ու պայմաններում: Աշխատության մեջ հատուկ ու որոշակի ցուցադրվում է Բաճակյանի արվեստի կախարհիչ զորությունը, բանաստեղծի ստեղծագործության մակարդակն ու հայրենասիրական խոր բովանդակությունը:

Հեղինակին հաջողվել է գրականագետի հասուն գրչով բացահայտել Բաճակյանի բանաստեղծության ժողովրդականությունը՝ ժողովրդի շահերին ծառայելու, կյանքի իրականության ներուշիները ժողովրդայնության դիտակետից նայելու և ժողովրդի սրտով զգալու կարողությունը: Հեղինակը մանրամասնորեն քննարկում է բանաստեղծի ստեղծագործության բոլոր շրջանները, սկսած առաջին գրքից՝ «Նրբեր ու վերքեր» ժողովածուից մինչև սովետական շրջանի ստեղծագործությունները՝ «Սասմա Մհեր» վիպերգը, Հայրենական Մեծ պատերազմի շրջանում գրած բոցաշունչ բանաստեղծությունները, հրապարակախոսական հոգվածները, գրական հուշերն ու ելույթները:

Ա. Ինձիկյանի մենագրությունը մի գեղեցիկ նվեր է մեծ բանաստեղծի 80-ամյա հորելյանին:

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, «Ավետի Բաճակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքներ», 1955 թ., 105 էջ:

Արամ Ղանալանյանի այս աշխատությունը նվիրված է Ա. Բաճակյանի ստեղծագործության մեջ ժողովրդական բանահյուսության ունեցած դերին ու նշանակությանը: Չնայած աշխատության սուղ ծավալին հեղինակը կարողացել է ընդգրկել բոլոր այն նյութերը, որոնք բնորոշում են Բաճակյանի կապերն ու հարաբերությունները ժողովրդական բանահյուսության հետ: Աշխատությունը բաղկացած է երկու հիմնական մասից՝ ա) ժողովրդական բանահյուսության մշակումները Ավետի Բաճակյանի ստեղծագործության մեջ և բ) ժողովրդական բանահյուսության լեզվի և արտահայտչական միջոցների օգտագործումը Բաճակյանի կողմից: Աշխատությունն ունի նաև առաջաբան և վերջաբան:

Բանահյուսական անմիջական մշակումները և ժողովրդական աղբյուրներից բխող ինքնուրույն ստեղծագործությունները հեղինակը խմբավորել ու քննարկել է այն հիմնական թեմաների ու մոտիվների տակ, որոնք կազմում են հենց Բաճակյանի ստեղծագործության գաղափարական բովանդակությունը:

Թեմատիկ խմբավորման մեջ հեղինակը վերաբառագրել է ժողովրդական բանահյուսությունից բխող Բաճակյանի ստեղծագործությունների ժանրային յուրահատկությունները: Օրինակ՝ հանգամանորեն խոսվում է հայկական հերոսական վեպից վերցված «Սասմա Մհեր» դյուցազնավեպի մասին, բազմաթիվ լեգենդների, ավանդությունների, հերթախերի և առակների մասին:

Ք.